ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1961 Общественные науки

Ծ. Պ. Ադալան

ՍՄԿՊ-Ի ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Իր սկզբնավորման առաջին իսկ օրից մարքսիզմը կարևոր նշանակություն է տվել ազգային հարցի լուծմանը՝ նրա հիմքում դնելով ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարը։

Վ. Ի. Լենինը 1913 թ. ՌՍԴԲՊ կենտկոմի խորհրդակցությունում ազգային հարցի վերաբերյալ բանաձևում խնդիր է դնում ստեղծել այնպիսի դեմոկրատական ռեսպուբլիկա, որն ապահովում է «բոլոր ազգերի և լեզուների լիակատար իրավահավասարություն, պետական պարտադիր լեզվի բացակայություն, ապահովում է բնակչության տեղական բոլոր լեզուներով դասավանդություն ունեցող դպրոցներով և կոնստիտուցիայի մեջ մտցնելով մի հիմնական օրենք, որն անվավեր է հայտարարում ազգերից մեկի ունեցած ամեն մի արտոնություն և ազգային փոքրամասնության իրավունքների ամեն մի խախտում»[1]։

ՍՄԿՊ նոր Ծրագրի նախագծում բացառիկ պարզությամբ են շարադրված լենինյան ազգային քաղաքականության վեհ գաղափարները։ Ծրագրի նախագիծը նշում է, որ սոցիալիստական հասարակարգում ազգերը զարգանում են «նրանց մերձեցման, եղբայրական փոխօգնության ու բարեկամության ուղիներով»։ Ազգային հարցի լուծումը սոցիալիզմի կարևորագույն հաղթանակն է։

Նոր Ծրագրում հանրագումարի է բերված սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հարուստ փորձը և ապա նշված են կոմունիստական շինարարության շրջանում այդ բնագավառում կատարվելիք խնդիրները։

Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում պարտիայի առջև կարևոր խնդիր էր դրված՝ նախապատրաստել զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող բազմաթիվ ժողովուրդների անցումը սոցիալիզմին։ Մի շարք ժողովուրդներ այդ անցումը կատարեցին առանց կապիտալիզմի ստադիան ապրելու։ Այդ պայմաններում անհրաժեշտ էր, որ նախ և առաջ վերացվեր ցարիզմից ժառանգություն մնացած ժողովուրդների դարավոր հետամնացությունը։ Ուստի միջոցներ ձեռնարկվեցին այդ ժողովուրդների էկոնոմիկան արագ տեմպերով զարգացնելու համար։ Պարտիայի 2-րդ Ծրագրի նախագծում Վ. Ի. Լենինը 1919 թ. գրել է.

«Հետամնաց և թույլ ազգերին ցույց տրվող օգնությունն անհրաժեշտ է ուժեղացնել՝ աջակցելով յուրաքանչյուր ազգի բանվորների և գյուղացիների ինքնուրույն կազմակերպմանն ու լուսավորմանը՝ միջնադարի ու բուրժուական ճնշման դեմ մղած պայքարում, ինչպես նաև աջակցելով մինչև այժմ ճնշված

---

1 Վ. Ի. Լենին, երկ., հ. 19, էջ 530։

կամ նախկին անիրավահավասար ազգերի լեղվի ու գրականության զարգացմանը»[2]։

Հին աշխարհից մնացած տնտեսական անհավասարության վերացումով պայմաններ ստեղծվեցին ազգերի լիակատար քաղաքական իրավահավասարության, նրանց կուլտուրայի ծաղկման համար։ Դա հնարավորություն տվեց սոցիալիզմի հիմքի վրա բավարարել բոլոր ազգերի նյութական ու հոգևոր պահանջմունքները։ Ազգային հարաբերությունների կարևոր խնդիրը սովետական բոլոր ազգերի տնտեսական ու կուլտուրական փոխօգնությունն ու համագործակցությունն է, նրանց մերձեցումը կյանքի բոլոր բնագավառներում։

Այսպես, եթե արդյունաբերության արտադրանքը ՍՍՌՄ-ում 1913 թ. համեմատությամբ 1960 թ. ավելացել է 45 անգամ, ապա Հայաստանում այդ թիվը հասնում է 68-ի։ Նման փաստեր կարելի է բերել բոլոր ազգային ռեսպուբլիկաների վերաբերյալ։ Նախկինում հետամնաց ազգային ծայրամասերը այժմ ոչ միայն զարգացման բարձր մակարդակի են հասել, այլև տնտեսական սերտ կապերի մեջ են մտել մեր երկրի բազմաթիվ տնտեսական շրջանների հետ։ Դեռ ավելին, նախկինում հետամնաց Հայաստանը բազմապիսի բարձրորակ արտադրանք է արտահանում արտասահմանյան մոտ 40 երկրներ։

Արդյունաբերության զարգացման տեմպերը Հայկական ՍՍՌ-ում ավելի բարձր են, քան ՍՍՌՄ-ի միջինը։ Եթե ՍՍՌՄ երկրորդ հնգամյակի վերջում ամբողջ արտադրանքը, 1913 թ. հետ համեմատած, աճեց 8,5 անգամ, ապա Հայկական ՍՍՌ-ում՝ 12,5 անգամ։ Հայտնի է, որ նոր Ծրագրի նախագծում նախատեսվում է 1980 թ. ՍՍՌՄ-ում արդյունաբերության արտադրանքը ավելացնել 6 անգամ, մինչդեռ այդ նույն ժամանակամիջոցում Հայկական ՍՍՌ-ում արդյունաբերության արտադրանքի ծավալը, 1958 թ. հետ համեմատած կաճի 11 անգամ։

Կոմունիստական աշխատանքը մեր օրերում արդեն դառնում է մասսաներին ոգևորող կարևոր միջոց։ Պարտիայի XXII համագումարը արժանավայել դիմավորելու համար մեր ռեսպուբլիկայի 1500 կոմերիտական-երիտասարդական բրիգադներ, ցեխեր և հերթափոխություններ ստանձնել են բարձր պարտավորություններ, որոնց կատարման համար նրանք հերոսական պայքար են մղում։ Կոմունիստական աշխատանքի պատվավոր կոչման համար պայքարում են 912 կոլեկտիվներ, որոնցից 213-ը այժմ արժանացել են այդ կոչմանը։

Կոմունիստական աշխատանքի հարվածայինի կոչման համար պայքարող 5000 երիտասարդներից 500-ը նույնպես արժանացել են այդ պատվավոր կոչմանը։

Ձեռք բերած հաջողությունները հետևանք են ոչ միայն մեր ժողովրդի հերոսական աշխատանքի, այլ նաև մեր երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական օգնության։

Այդ տեսակետից լավագույն օրինակ են տալիս Անդրկովկասի ռեսպուբլիկաները։

Հայկական ՍՍՌ-ն էլեկտրաէներգիա է տալիս Նախիջևանի ավտոնոմ ռեսպուբլիկային, իսկ Վաբաղաղ—Թբիլիսի—Երևան դպամուղը, որը ժողովուրդը եղբայրական ջերմ զգացումներով անվանում է «բարեկամության

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 119։

տրասսա», Էներգիա է մատակարարում հազարավոր բնակարանների և արդյունաբերական ձեռնարկությունների։

Անդրկովկասում արդեն անհրաժեշտություն է դարձել միջ-ռեսպուբլիկական տնտեսական օրգանների ստեղծումը, հատկապես ոռոգման, էլեկտրացանցի, տրանսպորտի գծով և այլն, որը կնպաստի կոմունիստական շինարարության խնդիրների հաջող լուծմանը։ Կոմունիզմի շինարարության խնդիրները անհամատեղելի են տեղայնության և ազգային էգոիզմի հետ։ Վերջերս, սեպտեմբերի 12-ին, ստեղծված «Անդրկովկասի տնտեսական շրջանի կոորդինացման ու պլանավորման խորհուրդը» նպատակ ունի ուժեղացնելու տնտեսական համագործակցությունը մեր եղբայրական ժողովուրդների միջև։

Արդյունաբերության ճիշտ տեղաբաշխումը հիմք է հանդիսանում ավելի նպատակահարմար կերպով իրագործելու առանձին ռեսպուբլիկաների միջև աշխատանքի սոցիալիստական բաժանումը, որը հաշվի կառնի թե՛ առանձին ռեսպուբլիկաների և թե՛ ամբողջ երկրի շահերը։

Պարտիան խնդիր է դնում է՛լ ավելի մեծ չափով ապահովել բոլոր սովետական ազգերի էկոնոմիկայի և կուլտուրայի բազմակողմանի զարգացումը, նրանց փոխադարձ համագործակցությունն ու օգնությունը, կյանքի բոլոր բնագավառներում տեղի ունեցող մերձեցումը։

Սովետական ռեսպուբլիկաների տնտեսական բազմակողմանի զարգացումը ենթադրում է բնական հարստությունների պլանաչափ շահագործում, արտադրության ռացիոնալ տեղաբաշխում, ռեսպուբլիկաների միջև աշխատանքի սոցիալիստական բաժանում, ամբողջ պետության և առանձին ռեսպուբլիկաների շահերի ճիշտ զուգորդում։ «Որքան սերտ լինի ազգերի շփումը, ասված է նախագծում, և որքան բարձր լինի համաժողովրդական խնդիրների ըմբռնումը, այնքան հաջողությամբ կհաղթահարվեն տեղայնության և ազգային էգոիզմի դրսևորումները»։

Պարտիան «կվարի բոլոր ազգերի, ազգությունների փաստական հավասարությունն ապահովող քաղաքականություն՝ լիովին հաշվի առնելով նրանց շահերը, առանձնահատուկ ուշադրություն նվիրելով երկրի այն շրջաններին, որոնք ավելի արագ զարգացման կարիք ունեն։ Կոմունիստական շինարարության պրոցեսում աճող բարիքները անհրաժեշտ է արդարացիորեն բաշխել բոլոր ազգերի և ազգությունների միջև»[3]։

ՍՄԿՊ XXI համագումարի և Կենտկոմի պլենումների որոշումներից հետո մեծ չափով ընդլայնվել են միութենական ռեսպուբլիկաների իրավունքները տնտեսական ու կուլտուրական շինարարության բնագավառում։

Եթե նախկինում մի շարք ռեսպուբլիկաներ հումքը ուղարկում էին ՌՍՖՍՌ-ի արդյունաբերական կենտրոնները և այնտեղից ստանում մեքենաներ ու տարբեր սարքավորումներ, ապա այժմ տեղական արդյունաբերության արագ զարգացման հետևանքով մեծ չափով աճել է պատրաստի արտադրանքի քանակը։ Ռեսպուբլիկաների փոխադարձ օգնությունը հնարավորություն է ստեղծում վերացնելու ծայրամասերի՝ նախկինում գոյություն ունեցող տնտեսական հետամնացությունը։

Ուկրաինական ՍՍՌ-ն երկրի տարբեր շրջաններն է ուղարկում բազմատեսակ արդյունաբերական և գյուղատնտեսական մեքենաներ, քարածուխ,

3 ՍՄԿՊ Ծրագրի նախագիծ, էջ 139։

գազ, շաքար, հացահատիկ և այլն։ Ուզբեկական ՍՍՌ-ն Բուխարայի շրջանում հայտնաբերված գազի մեծ պաշարի շնորհիվ կդառնա քիմիական արդյունաբերության խոշոր բազա։ Ուզբեկստանում արդյունաբերության զարգացման արագ տեմպերը ապահովում է այն հանգամանքը, որ ՌՍՖՍՌ-ն և Ադրբեջանական ՍՍՌ-ն նրան մատակարարում են անհրաժեշտ քանակությամբ խողովակներ և այլ սարքավորումներ։ Վրացական ՍՍՌ-ն արտահանում է մետաղահատ հաստոցներ, բեռնատար ավտոմեքենաներ, թեթև արդյունաբերության բազմաթիվ արտադրանքներ՝ թեյ, ցիտրուսային մի շարք կուլտուրաներ, Ղազախական ՍՍՌ-ն՝ գունավոր մետաղներ, երկաթի հանքաքար և այլն։

Պարտիայի վարած իմաստուն քաղաքականության շնորհիվ նախկինում հետամնաց կիսագաղութային ծայրամասերը այժմ դարձել են ծաղկած ռեսպուբլիկաներ։ Դրա վառ օրինակն է Սովետական Հայաստանը, որն այժմ արտադրում և երկրի տարբեր շրջաններն է ուղարկում շարժական էլեկտրակայաններ, գեներատորներ, ճշգրիտ սարքեր, հաստոցներ, պղինձ, ալյումին, մոլիբդեն, սինթետիկ կաուչուկ, կարբիդ, ավտոդողեր և թեթև ու սննդի արդյունաբերության բազմաթիվ այլ արտադրանքներ։

ՀՍՍՌ-ն իր հերթին երկրի տարբեր ծայրերից ստանում է մեծ քանակությամբ մեքենաներ, սարքավորումներ և հումք։

Այդ բոլորը նպաստում է մեր երկրի տնտեսական կապերի ամրապնդմանը։ Պարտիայի Ծրագրի նախագիծը խնդիր է դնում՝ ստեղծել նաև միջ-ռեսպուբլիկական տնտեսական օրգաններ, որոնք կնպաստեն տնտեսական օրգանների աշխատանքը ավելի էֆեկտիվ և արտադրական ձեռնարկությունների կապերը ավելի ամուր դարձնելու։

Սոցիալիստական ազգերի զարգացման հետ մեկտեղ ուժեղանում են նրանց կապերն ու փոխադարձ օգնությունը, որը և նպաստում է ընդհանուր խնդիրների հաջող լուծմանը։

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում ազգային հարաբերությունների զարգացումը տանում է դեպի նրանց հետագա մերձեցումը, բարեկամական կապերի ամրապնդումը։ Դրա համար էլ նախագծում խնդիր է դրվում «տնտեսական ասպարեզում այսուհետև ևս վարել Սովետական Ռեսպուբլիկաների տնտեսության համակողմանի զարգացման գիծ. ապահովել արտադրության ռացիոնալ տեղաբաշխումը և բնական հարստությունների պլանաչափ շահագործում, կատարելագործել ռեսպուբլիկաների միջև աշխատանքի սոցիալիստական բաժանումը, միավորելով և համաձայնեցնելով նրանց աշխատանքային ջանքերը, ճիշտ զուգորդելով ամբողջ պետության շահերը յուրաքանչյուր սովետական ռեսպուբլիկայի շահերի հետ»[4]։

Ազգերի մերձեցման համար շատ կարևոր նշանակություն ունի տարբեր ռեսպուբլիկաների արդյունաբերական ձեռնարկությունների, քաղաքների, կոլտնտեսությունների, շրջանների սոցիալիստական մրցությունը, արվեստի աշխատողների, թատերական խմբերի փոխադարձ այցելությունները, համատեղ գիտական ու ստեղծագործական սեսիաներն ու կոնֆերանսները, ուսանողական կոլեկտիվների հանդիպումները և նման բազմապիսի միջոցառումներ։

---

[4] Նույն տեղում, էջ 140։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակով մեր երկրում ազգերի զարգացման համար ստեղծվեցին լայն հնարավորություններ. «Սոցիալիզմի պայմաններում տեղի է ունենում ազգերի ծաղկում, ասված է նախագծում, ամրապնդվում է նրանց սուվերենությունը։ Ազգերի զարգացումը կատարվում է ոչ թե ազգային միջնորմների, ազգային սահմանափակության ու էգոիզմի ուժեղացման ուղիներով, ինչպես դա տեղի է ունենում կապիտալիզմի օրոք, այլ նրանց մերձեցման, եղբայրական վոխօգնության ու բարեկամության ուղիներով»[5]։

* * *

Մեր երկրի ժողովուրդների փոխադարձ կապերի ու նրանց շփման ընդլայնմանը մեծ չափով նպաստում են արդյունաբերական նոր կենտրոնների ստեղծումն ու բնական հարստությունների հայտնաբերումը, ինչպես նաև խոպան հողերի յուրացումը, հաղորդակցության միջոցների ընդարձակումը։ Այդ բոլորը արագացնում է բնակչության շարժունակությունն ու տեղաշարժերը և պայմաններ է ստեղծում ազգերի ու ժողովուրդների ավելի լայն շփման համար։

Տեղաշարժերը կատարվում են նաև կապիտալիզմի ժամանակ, որոնց հիմքում ընկած է կարիքը և մի կտոր հաց գտնելու հոգսը։ Սոցիալիզմի ժամանակ դրանց հիմքում ընկած է եղբայրական օգնության բարձր զգացումը, որի ժամանակ ամեն մեկը ցանկանում է լինել այնտեղ, որտեղ նրա աշխատանքի և գիտելիքների կարիքն է զգացվում։ Սովետական մարդկանց այդ հայրենասիրական զգացումը մեծ չափով դրսևորվեց խոպան հողերի յուրացման, մեծ կառուցումների ստեղծման, ինչպես նաև Ղարադաղ—Թբիլիսի—Երևան գազամուղի «բարեկամության տրասսան» կառուցելու ժամանակ։

Ամեն մի խոշոր կառուցում, որտեղ էլ նա գտնվի, արդյունք է ինտերնացիոնալ աշխատանքի, բոլոր ժողովուրդների համատեղ ջանքերի։ Տնտեսական աննախընթաց վերելքն ավելի է ուժեղացնում ռեսպուբլիկաների բազմազգ բնույթը, որն իր հերթին ավելի է ամրապնդում մեր ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։ Ժողովրդի տեղաշարժեր տեղի են ունենում նաև ամեն մի ռեսպուբլիկայի ներսում։ Հայաստանում բնակչության այդպիսի հոսք է ստեղծված այժմ դեպի Երևան, Կիրովական, Հրազդան և այլ արդյունաբերական վայրեր։

«ՍՍՌՄ-ի շրջանակներում, ասված է նախագծում, միութենական ռեսպուբլիկաների միջև եղած սահմանները ավելի ու ավելի են կորցնում իրենց երբեմնի նշանակությունը, քանի որ բոլոր ազգերը իրավահավասար են, նրանց կյանքը կառուցվում է միասնական սոցիալիստական հիմքերի վրա, և հավասար չափով բավարարվում են յուրաքանչյուր ժողովրդի նյութական ու հոգևոր պահանջները, նրանք բոլորը ընդհանուր կենսական շահերով միավորված են մեկ ընտանիքում և ընթանում են դեպի միասնական նպատակը՝ կոմունիզմ»։

Սովետական մարդիկ սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում ձեռք են բերել շատ ընդհանուր գծեր։

«Տարբեր ազգություններին պատկանող սովետական մարդկանց մեջ, ասված է նախագծում, ստեղծվել են հոգևոր կերպարի ընդհանուր գծեր, որոնք

5 Նույն տեղում, էջ 136—137։

հասարակական նոր տիպի հարաբերությունների ծնունդ են և որոնք մարմնավորում են ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների լավագույն տրադիցիաները»։

Այդ տրադիցիաները էլ ավելի կզարգանան կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, որը և նշանավորում է ազգային հարաբերությունների զարգացման նոր էտապ, երբ տեղի է ունենում ազգերի հետագա մերձեցում։

«Ավելի ու ավելի ինտենսիվ է դառնում նյութական ու հոգևոր հարստությունների փոխանակումը ազգերի միջև, աճում է յուրաքանչյուր ռեսպուբլիկայի ավանդը կոմունիստական շինարարության ընդհանուր գործում»[6]։

Դասակարգերի վերացումը ավելի է ամրապնդում ազգի սոցիալական միատարրությունը և նպաստում կուլտուրայի ու կենցաղի մեջ ընդհանուր կոմունիստական գծերի զարգացմանը։ «Դասակարգերի միջև եղած սահմանների ջնջվելը, ասված է նախագծում, և կոմունիստական հասարակական հարաբերությունների զարգացումը ուժեղացնում են ազգերի սոցիալական միասնությունը, նպաստում են կուլտուրայի, բարոյականության ու կենցաղի կոմունիստական ընդհանուր գծերի զարգացմանը, նրանց փոխադարձ վստահության ու բարեկամության հետագա ամրապնդմանը'։

Սոցիալիստական ազգերի մերձեցումն ու բարեկամական կապերի ամրապրնդումը ոչ պակաս չափերով տեղի են ունենում նաև կուլտուրայի ու առհասարակ հոգևկան կյանքի բազմաթիվ բնագավառներում։ Կուլտուրական կյանքի փոխադարձ շփումներն ու կապերը հարստացնում են մեր ընդհանուր կուլտուրան նոր գծերով։ Այդ ընդհանուր կուլտուրայի ուղին ազգային կուլտուրաների աննախընթաց վերելքի և դրանց սոցիալիստական բովանդակություն զարգացնելու մեջ է։ Գնալով ազգային ձևը դիալեկտիկական զարգացման է ենթարկվում և փոխվում իր կոմունիստական բովանդակության համապատասխան։

«Սոցիալիստական ազգերի զարգացման պատմական փորձը ցույց է տալիս, ասված է նախագծում, որ ազգային ձևերը չեն քարանում, այլ կերպարանափոխվում, կատարելագործվում և մերձենում են միմյանց, ազատվելով հնացած այն ամենից, ինչը հակասում է կյանքի նոր պայմաններին»[8]։ Ահա այդ ձևով է ստեղծվում սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ կուլտուրան։

Կոմունիստական պարտիան հատուկ ուշադրություն է դարձնում ժողովուրդների մոտ պատմականորեն ձևավորված սովորություններին, որոնց առաջավոր տրադիցիաները խրախուսում ու բոլոր ազգերի սեփականությունն է դարձնում։ «Պաշտպանելով յուրաքանչյուր ժողովրդի առաջադիմական տրադիցիաները, ասված է նախագծում, դրանք դարձնելով սովետական բոլոր մարդկանց սեփականություն, պարտիան ըստ ամենայնի կգարգացնի կոմունիզմ կառուցողների նոր, բոլոր ազգերի համար միասնական ոևոյյուցիոն տրադիցիաներ»[9]։ Այստեղ ընդգծված է կոմունիստական շինարարության բովում ընդհանուր հոգևոր կուլտուրայի ստեղծման դիալեկտիկական պրոցեսը։

---

6 Նույն տեղում, էջ 137։
7 Նույն տեղում, էջ 138։
8 Նույն տեղում, էջ 140։
9 Նույն տեղում, էջ 140։

Պետք է կարողանալ այնպես օգտագործել դարերի խորքից եկող սովորությունները ու պրոգրեսիվ գծերը, որ նրանք օգնեն կոմունիզմի մարդու դաստիարակմանը, կոմունիզմ կառուցողների բարոյական կոդեքսի հարստացմանը։ Դատապարտելով հին, ռեակցիոնը, պետք է այն փոխարինել կոմունիստական բովանդակություն ունեցող նորով, որը կարողանա բավարարել կոմունիզմ կառուցող մարդու պահանջները։

Ծրագրում հանճարեղ խորաթափանցությամբ է դրված տարբեր ազգերի կուլտուրական արժեքների գնահատման խնդիրը. «Յուրաքանչյուր ազգի կուլտուրական գանձարանը, ասված է նախագծում, ավելի ու ավելի է հարստանում ինտերնացիոնալ բնույթի ստեղծագործություններով»։ Եվ ապա ազգերի հետագա մերձեցման ու նրանց հոգևոր կուլտուրայի ընդհանրության համար խոշոր դեր է կատարում լեզուն։ Առհասարակ շատ լեզուներ գիտենալը մարդուն մեծ հնարավորություն է տալիս ավելի լայն գիտելիքներ ձեռք բերել։

Մեր երկրում ռուսաց լեզուն այժմ դարձել է ընդհանուր հաղորդակցության միջոց, թե՛ ռուսական հարուստ կուլտուրային և թե՛ համաշխարհային կուլտուրական ժառանգությանը ծանոթանալու միջոց։ Վ. Ի. Լենինը իր ժամանակ պարտիայի ազգային քաղաքականությունը ծողներին զգուշացրել է, որ կարիք չկա անհանգստանալ ռուսաց լեզվի բախտի համար, նա ինքը իր համար ուղի կհարթի։

Այլ կերպ չի կարող լինել մեր պայմաններում, երբ ռուս մեծ ժողովուրդը ավագ եղբոր հոգատարությամբ է շրջապատել բոլոր մյուս ազգերին ու ժողովուրդներին, իր հումանիզմով և ինտերնացիոնալիզմի վեհ գաղափարներով փայլուն օրինակ է ցույց տալիս։

Ռուսաց լեզուն այժմ դարձել է բոլոր ազգերի հաղորդակցության միջոց, ազգային կուլտուրան առաջ մղող կարևոր գործոն։ Մեր երկրի ժողովուրդների կուլտուրային ևս մենք կարողանում ենք ծանոթանալ առաջին հերթին ռուսաց լեզվի օգնությամբ. այդ իսկ պատճառով ռուսաց լեզուն մեր երկրի բոլոր ժողովուրդների համար դարձել է երկրորդ մայրենի լեզու։ Հենց դրա համար էլ Հայաստանում, ժողովրդի ցանկությամբ, առաջին դասարանից սկսած երեխան հայոց լեզվին զուգահեռ սկսում է սովորել նաև ռուսաց լեզուն։

Ռուսաց լեզվի կարևոր դերի մասին Ծրագրի նախագծում ասված է.

«Մայրենի լեզվի հետ մեկտեղ ռուսաց լեզուն կամովին սովորելու՝ կյանքում տեղի ունեցող պրոցեսը դրական նշանակություն ունի, քանի որ դա նպաստում է փորձի փոխանակմանը և այն բանին, որ յուրաքանչյուր ազգ և ազգություն հաղորդակից են լինում ՍՍՌՄ-ի մյուս բոլոր ժողովուրդների կուլտուրական նվաճումներին և համաշխարհային կուլտուրային։ Ռուսաց լեզուն փաստորեն դարձել է ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների ազգամիջյան հաղորդակցման և համագործակցության ընդհանուր լեզու»[10]։

Կոմունիստական պարտիան, ազգային քաղաքականության մեջ ղեկավարվելով լենինյան սկզբունքներով, միշտ էլ կարևոր նշանակություն է տվել բոլոր ժողովուրդների մայրենի լեզվի ազատ ու անկաշկանդ զարգացմանը։ Նոր Ծրագրի նախագծում պարտիան խնդիր է դնում. «Հետագայում ևս ապահովել ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների ազատ զարգացումը. ՍՍՌՄ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել լիակատար ազատություն՝ խոսելու,

10 Նույն տեղում, էջ 140—141։

իր երեխաներին դաստիարակելու և ուսման տալու ցանկացած լեզվով, թույլ չտալով ոչ մի արտոնություն, սահմանափակում կամ հարկադրանք այս կամ այն լեզվի գործածության հարցում։ Ժողովուրդների եղբայրական բարեկամության և փոխադարձ վստահության պայմաններում ազգային լեզուները զարգանում են իրավահավասարության և փոխհարստացման հիման վրա»[11]։

Ազգային հարաբերությունների նման պայմաններում էլ ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների լեզուների հետագա անկաշկանդ զարգացման, հարստացման ու ծաղկման համար։ Ժողովուրդների ավելի լայն շփումը, տեխնիկայի և գիտության զարգացումը կնպաստեն լեզուների փոխհարստացմանը։

Վ. Ի. Լենինը 1920 թ. ««Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքում գրել է.

«Քանի գեռ ժողովուրդների ու երկրների միջև գոյություն ունեն ազգային ու պետական տարբերություններ—իսկ այդ տարբերությունները պրոլետարիատի դիկտատուրան նույնիսկ համաշխարհային մասշտաբով իրագործվելուց հետո էլ կպահպանվեն շատ ու շատ երկար ժամանակ—բոլոր երկրների կոմունիստական շարժման ինտերնացիոնալ տակտիկայի միասնությունը պահանջում է ոչ թե բազմազանության վերացում, ոչ թե ազգային տարբերությունների ոչնչացում (դա անմիտ ցնորք է ներկա մոմենտի համար), այլ կոմունիզմի հիմնական սկզբունքների (Սովետական իշխանություն և պրոլետարիատի դիկտատուրա) այնպիսի կիրառում, որը մասնավորություններում ճիշտ ձևափոխեր այդ սկզբունքը, դրանք ճիշտ հարմարեցներ, կիրառեր ազգային ու ազգային-պետական տարբերությունների նկատմամբ»[12]։

Այդ միտքն է ընդգծվում նաև նոր Ծրագրի նախագծում։

«Սակայն, նշված է նախագծում, ազգային տարբերությունների, հատկապես լեզվական տարբերությունների ջնջվելը, զգալիորեն ավելի տևական պրոցես է, քան դասակարգային սահմանագծերի ջնջվելը»։ Մայրենի լեզվի կարևորությունը միանգամայն ակնհայտ է։ Վերցնենք հայոց լեզուն, որի միջոցով ուսումնասիրվում և ուրիշ ժողովուրդների սեփականությունն է դառնում մեր ժողովրդի բազմադարյան հարուստ կուլտուրան, Մատենադարանում և այլ տեղերում պահվող կուլտուրական արժեքները։ Նույնը կարելի է ասել նաև բազմաթիվ այլ կուլտուրական ժողովուրդների լեզուների մասին։ Այստեղ չի կարելի տեղի ունենալ որևէ բռնություն։ «Ազգային փոխհարաբերությունների բոլոր հարցերը, այնուհետև ասված է նախագծում, պարտիան լուծում է պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից, լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառման հիման վրա»[13]։

Այստեղ շատ կարևոր է, որ ամեն մի ազգի առաջադեմ գծերը, կուլտուրական ժառանգությունը փոխադարձ շփման ժամանակ մտնի համատեղ ջանքերով ստեղծվող ընդհանուր կուլտուրայի դանձարանը և դառնա կոմունիստական հասարակության սեփականությունը։

Նախագծում այդ մասին նշվում է. «Պարտիան թույլ չի տալիս ազգային առանձնահատկությունների ոչ անտեսում, ոչ էլ ուռճացում»[14]։ Ուրիշ խոսքով

---

11 Նույն տեղում, էջ 140։
12 Վ. Ի. Լենին, Երկեր. հ. 31, էջ 98։
13 ՍՄԿՊ Ծրագրի նախագիծ, էջ 138։
14 Նույն տեղում, էջ 138։

պահանջվում է, որ ազգային հարաբերությունների զարգացումը ընթանա կոմունիզմի զարգացման օրինաչափություններին համապատասխան։ Իսկ այդ օրինաչափությունն ասում է, որ «կոմունիզմի ժամանակ ավելի ու ավելի մեծ չափով համակողմանիորեն իրար կմերձենան ազգերը տնտեսական, քաղաքական և հոգևոր շահերի լիակատար ընդհանրության, եղբայրական բարեկամության ու համագործակցության հիման վրա»։

Կարևոր խնդիր է դրվում ոչ միայն ապահովել տնտեսական ու կուլտուրական արժեքների զարգացումն ու օգտագործումը, այլ նաև, ինչպես նշվում է նախագծում, «մինչև վերջ օգտագործել ու կատարելագործել ՍՍՌՄ ժողովուրդների ազգային պետականության ձևերը»[15]։ Այսպիսով, պարտիան խնդիր է դնում կոմունիստական նոր կյանքը հարստացնել բոլոր ազգերի ու ժողովուրդների կողմից ստեղծվող նյութական ու հոգևոր կուլտուրայի կարևոր նշանակություն ունեցող արժեքներով։

Այդպիսի խնդիր կարող էր դնել ժողովրդի շահերը պաշտպանող միակ պարտիան, Կոմունիստական պարտիան, որի նպատակն է հասնել հասարակական կյանքի կազմակերպման բարձրագույն ձևին՝ կոմունիզմին։

Ազգային հարաբերությունների հետագա զարգացման կարևորագույն խնդիրը պարտիան համարում է ինտերնացիոնալիզմի դաղափարների անշեղ կիրառումը. «Ամրապնդել ժողովուրդների բարեկամությունը, որպես սոցիալիզմի կարևորագույն նվաճումներից մեկը, անհաշտ պայքար մղել ամեն տեսակ նացիոնալիզմի ու շովինիզմի դրսևորումների և մնացուկների դեմ, ազգային սահմանափակության և բացառիկության, անցյալի իդեալականացման և ժողովուրդների պատմության մեջ սոցիալական հակասությունների սքողման տենդենցների դեմ, իրենց դարն ապրած սովորույթների և բարքերի դեմ»[16]

Ժողովուրդների միջև բարեկամական կապերի ամրապնդման, փոխադարձ օգնության, փորձի փոխանակման համար խիստ կարևոր է կադրերի փոխանակումը։ Նոր Ծրագիրը հատկապես նշում է.

«Կոմունիստական շինարարության աճող մասշտաբները պահանջում են կադրերի մշտական փոխանակում ազգերի միջև։ Սովետական ռեսպուբլիկաներում տարբեր ազգությունների աշխատողների դաստիարակության և օգտագործման ասպարեզում անթույլատրելի է ազգային մեկուսացվածության որևէ դրսևորում։ Նացիոնալիզմի դրսևորումների վերացումը համապատասխանում է ՍՍՌՄ բոլոր ազգերի և ազգությունների շահերին»։

Սոցիալիստական շինարարության անցած տարիների ամբողջ փորձը ցույց է տվել, որ «յուրաքանչյուր սովետական ռեսպուբլիկա կարող է այսուհետև էլ ծաղկել և ամրապնդվել միայն ՍՍՌՄ եղբայրական սոցիալիստական ազգերի մեծ ընտանիքում»[17]։ Սոցիալիստական ազգերի փոխհարաբերությունների և նրանց զարգացման խնդրում կարևոր նշանակություն ունի մեր պատմության և առհասարակ կուլտուրական ժառանգության ճիշտ գնահատման հարցը։ Պարտիան խնդիր է դնում անհաշտ պայքար մղել նացիոնալիզմի և շովինիզմի բոլոր տեսակի արտահայտությունների դեմ, ազգային սահմանափակության և ազգային «բացառիկության», անցյալի իդեալականացման,

15 Նույն տեղում, էջ 138։
16 Նույն տեղում, էջ 141։
17 Նույն տեղում, էջ 141։

սոցիալական ներհակությունների սրողման դեմ, իրենց դարն ապրած սովորությունների ու բարքերի դեմ և այլն։

Այդ տեսակետից հումանիտար գիտությունների առջև կարևոր խնդիր է ծառանում վեր հանել ժողովուրդների պատմության փոխադարձ կապերը, նրանց աշխատանքի ու պայքարի առաջավոր տրադիցիաները, նրանց զարգացման օրինաչափությունները և այդ նյութի հիման վրա դաստիարակել նոր սերնդին։

Պատմական դեպքերի լուսաբանման ասպարեզում դասակարգային պայքարի դիրքերից նահանջելը, այս կամ այն ժողովրդի պատմությունը կղզիացած ցույց տալու ձգտումը, ազգային յուրահատկությունները ուռճնելն ու նրանցով տարվելը, անցյալի առանձին գործիչներին չափից դուրս իդեալականացնելը—այս բոլորը վնաս է բերում ընդհանուր գործին։

Անհրաժեշտ է ամեն մի ժողովրդի պատմությունը և նրա դերը շարադրելիս ցույց տալ նաև մյուս ժողովուրդների դերն ու նրանց կապերի ու շփումների շնորհիվ ընդհանուր կուլտուրայի զարգացումը։ Այդ պրոցեսն է, որ փոխադարձ հարստացման և պրոգրեսի հնարավորություն է ստեղծել։ Ազգի «բացառիկության» գաղափարը տանում է դեպի ռասայական տեսությունը և վնասում է ինտերնացիոնալիզմի գործին։

Այդ հարցի ճիշտ ըմբռնումը պետք է ելնի այն բանից, որ չհեռանալով ազգային հիմքերից, ըստ արժանվույն գնահատելով սովետական բոլոր ազգերի մտցրած լուման մեր երկրի և ամբողջ աշխարհի անցյալ ու ներկա շրջանի կուլտուրայի զարգացման գործում, հիմնական շեշտը դրվի այն կապերի, փոխազդեցության, մտերմության, փոխադարձ օգնության, միասնության վրա, որոնք տարբեր դարաշրջաններում, տարբեր ձևերով գոյություն են ունեցել ու զարգացել մեր երկրի ժողովուրդների միջև, որոնք վեր են ածվել կատարյալ եղբայրության և միշտ վառ են պահել բարեկամության ջահը։

Բարեկամության ու եղբայրության ամրապնդումը և ատելությունը, անհանդուրժողականությունը դեպի նացիոնալիզմն ու ռասայական վայրագ բարքերը կոմունիզմ կառուցող մարդկանց բարոյական կոդեքսի գլխավոր սկզբունքներից մեկն են։

Նոր Ծրագրի նախագծում նշվում է, որ «Կոմունիստական հասարակարգի կառուցումը դարձել է սովետական ժողովրդի անմիջական գործնական խնդիրը։ Սոցիալիզմի աստիճանական վերաճումը կոմունիզմի—օբյեկտիվ օրինաչափություն է. այդ վերաճումը նախապատրաստված է սովետական սոցիալիստական հասարակարգի ամբողջ նախընթաց զարգացումով»[18]։ Եվ մենք այդ մեծ հաղթանակները ավելի կբազմապատկենք հանուն մարդկության պայծառ ապագայի, հանուն կոմունիզմի։

ՍՄԿՊ նոր Ծրագիրը մարքսիզմի-լենինիզմի գանձարանը հարստացնող, ժողովուրդներին ազատության կոչող պատմական փաստաթուղթ է։

---

18 Նույն տեղում, էջ 76։